

## Արձանագրություն №10/2018-2019

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2019թ. մայիսի 23-ին տեղի ունեցած թիվ 10 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 62-ը (վաթսուներկու):  
Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. Դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ. գիտխորհրդի՝ հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ն.Ն. Մարտիրոսյան):
2. ԵՊՀ կառուցվածքում և հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին միջնորդելու մասին (զեկ. ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան):
3. Մագիստրոսի կրթական ծրագրով 2019-2020 ուստարվա ընդունելության տեղերը հաստատելու մասին (զեկ. պրոռեկտոր Մ. Ա. Սողոմոնյան):
4. Ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների տրամադրման կարգում փոփոխություններ կատարելու մասին (զեկ. պրոռեկտոր Մ. Ա. Սողոմոնյան):
5. ԵՊՀ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին (զեկ. ուսումնամեթոդական վարչ. պետ Հ.Գ. Ժամհարյան):
6. ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը հաստատելու մասին (զեկ. գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողովի նախագահ Է.Ս. Գևորգյան):
7. ԵՊՀ գիտական խորհրդի հանձնաժողովներում փոփոխություններ կատարելու մասին (զեկ. գիտքարտուղար Լ. Ս. Հովսեփյան):
8. Զեկուցում. ՀՀ ռազմական բարեփոխումներն արդի մարտահրավերների համատեքստում (զեկ. ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Ա.Կ. Հովհաննիսյան):

Արհեստակցական կազմակերպության նախագահ Արմեն Ավետիսյանն առաջարկեց օրակարգից հանել 4-րդ և 5-րդ կետերը, որոնք վերաբերում էին «Ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների տրամադրման կարգում» փոփոխություններ կատարելուն և «ԵՊՀ դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգում» փոփոխություններին, քանի որ,

նրա հավաստամամբ, դրանք իրավական լրացուցիչ ընթացակարգեր պետք է անցնեն մինչև գիտխորհրդի հաստատմանը ներկայացնելը:

Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Մենուա Սողոմոնյանը փաստեց, որ օրակարգի 4-րդ կետով առաջարկվող փոփոխությունը մեկն է, որի իրավական հիմքը ՀՀ կառավարության ընդունած համապատասխան որոշումն է:

Գիտխորհրդի անդամները որոշեցին օրակարգից հանել 5-րդ կետը. օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

**1. Լսեցին.** - դոցենտի գիտական կոչումների շնորհում:

Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ն. Ն. Մարտիրոսյանը ներկայացրեց դոցենտի կոչումների հավակնորդների մասին ամփոփ տվյալներ: Դոցենտի կոչման հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Պետրոսյան Ռուզաննա Արշակի	Դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս
2.	Մելքոնյան Նաիրա Իշխանի	Ֆրանսիական բանասիրության ամբիոնի ասիստենտ
3.	Հովհաննիսյան Արմեն Արտաշեսի	Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ
4.	Թավադյան Արսեն Աշոտի	Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ
5.	Սուջյան Տաթևիկ Հովհաննեսի	Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ
6.	Մարաբյան Սերգեյ Ռուբիկի	Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Առուստամյան Աշոտ (նախագահ)
2. Բարսեղյան Գևորգ
3. Ալավերդյան Մանուշակ

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 62 անդամներից 60-ը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա.Առուստամյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	դեմ	անվավեր
Դոցենտի կոչման հավակնորդներ				
1.	Պետրոսյան Ռուզաննա Արշակի	58	2	0
2.	Մելքոնյան Նաիրա Իշխանի	57	3	0
3.	Հովհաննիսյան Արմեն Արտաշեսի	58	2	0

4.	Թավադյան Արսեն Աշոտի	58	2	0
5.	Մուջյան Տաթևիկ Հովհաննեսի	58	2	0
6.	Մարաբյան Սերգեյ Ռուբիկի	60	0	0

**Որոշեցին.** – 2.1 Հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

2.2 Միջնորդել ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն որակավորման կոմիտե՝ հաստատելու վերոնշյալ աշխատակիցներին դոցենտի կոչումներ շնորհելու մասին ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը:

**2. Լսեցին.** – ԵՊՀ կառուցվածքում և հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին միջնորդելու մասին, որը ներկայացրեց ռեկտոր Ա. Սիմոնյանը: Նա նկատեց, որ ԵՊՀ-ում միշտ կառուցվածքային փոփոխություններ են տեղի ունենում և ներկայում ստեղծված է ԵՊՀ-ում բարեփոխումների իրականացման աշխատանքները համակարգող հանձնաժողով, որտեղ ընդգրկվել են գրեթե բոլոր ստորաբաժանումների ներկայացուցիչները: Հանձնաժողովը հոգաբարձուների խորհրդի նախագահի հետ բանակցելու ճանապարհով իրենց նիստերի որոշումները քննարկել է և ներկայացրել ռեկտորատին: Մասնավորապես առաջարկվում է ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով ու գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորների հաստիքների վերացում, ապա նրանց գործառույթների մեկտեղմամբ երկու պրոռեկտորների նոր հաստիքների ստեղծում՝ հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով և բնական ուճգրիտ մասնագիտությունների գծով, որոնք կհամակարգեն իրենց ենթակայության տակ գտնվող ուղղությունների և՛ գիտական, և՛ կրթական գործունեությունը: «Միջազգային պրակտիկան էլ ցույց է տալիս, որ գիտությունը և կրթությունը չեն կարող առանձին գործել: Ի դեպ, մեր գործունեության ընթացքում եղել է ժամանակ, երբ պրոռեկտորների գործառույթներն այսպես են եղել»,–նշեց Ա. Սիմոնյանը: Նախատեսվող փոփոխություններից է նաև որակի ապահովման կենտրոնի անցումը ռեկտորի համակարգման ներքո, որը մինչև հիմա գտնվում է ուսումնական գծով պրոռեկտորի ենթակայության տակ: Որակի ապահովման խնդիրներով զբաղվող կենտրոնը և կենսագործողը նույն պրոռեկտորի ենթակայության տակ հարմար չէ, այն պետք է լինի ավելի բարձր ղեկավարության ներքո:

Առաջարկվում է վերացնել ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստիքը, քանի որ դրա ենթակայության ներքո այսօր գործող ստորաբաժանումներ չկան: Փոխարենը նախատեսվում է ստեղծել արտաքին կապերի գծով պրոռեկտորի հաստիք, որը կհամակարգի միջազգային կապերը, արտասահմանյան դրամաշնորհները, հայաստանյան բուհերի, կազմակերպությունների հետ կապերը, ֆոնդահայթայթման գործառույթը և Ռուսական կենտրոնի գործունեությունը և այլն: Այն արդյունավետ կդարձնի արտաքին կապերի մշակումը, ապահովումն ու զարգացումը:

Ըստ Ա. Սիմոնյանի ներկայացման՝ բազմիցս քննարկվել է այն, որ հաշվապահությունը որպես մեկ մարմին չի կարող միաժամանակ և ֆինանսական քաղաքականությունը որոշել, իրականացնել և վերահսկել, այդ գործառույթները պետք է տարանջատել: Ուստի, առաջարկվում է նաև հաշվապահության վերակազմակերպում՝ դրա բազայի վրա ստեղծելով 2 ստորաբաժանումներ՝ 1/հաշվապահական վարչություն՝ ընդհանուր հարցերով պրոռեկտորի ենթակայության ներքո, 2/ֆինանսական վերլուծության վարչություն՝ ռեկտորի համակարգման ներքո: Այս փոփոխության արդյունքում հաստիքների աճ չի լինելու, փոխարենը՝ կլինի որոշակի կրճատում: Առաջարկվող մեկ այլ փոփոխություն վերաբերում է գնումների ոլորտին, որով նախատեսվում է գնումների պլանավորման և պահեստավորման վարչությունը

վերակազմակերպել գնումների կազմակերպման բաժնի, և դա դնել ընդհանուր հարցերով պրոռեկտորի համակարգման ներքո, քանի որ գնումների ոլորտը չափազանց մեծ ժամանակ է խլում ռեկտորի աշխատատեղից: Առաջարկվում է նաև տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման վարչության վերակազմավորում տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության՝ 2 բաժիններով. 1/տեղեկատվական անվտանգության ապահովման բաժին, 2/տեխնիկայի և ցանցերի սպասարկման բաժին: Վարչությունը կլինի ընդհանուր հարցերով պրոռեկտորի համակարգման ներքո: Փոփոխություններով ներկայում գործող 1 բաժին լուծարվում է:

Ընդհանուր հարցերով պրոռեկտորի համակարգման ներքո տնտեսական վարչության ստեղծում (երկու բաժիններով՝ 1/տեխնիկական սպասարկման բաժին, 2/տարածքի բարեկարգման և կանաչապատման բաժին)՝ դրանում միավորելով ներկայիս գործող հետևյալ ստորաբաժանումների գործառույթները՝ 1/ տնտեսական գործունեության կազմակերպման և վերահսկման բաժին, 2/ էներգետիկ համակարգի շահագործման բաժին, 3/ մեխանիկական արհեստանոց, 4/ կաթսայատուն, 5/հակահրդեհային ծառայություն, 6/ ավտոպարկ, 7/ տարածքի բարեկարգման և կանաչապատման բաժին:

Առաջարկվում է նաև ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի և շրջանավարտների և կարիերայի կենտրոնի միավորում՝ անցնելով ռեկտորի համակարգման ներքո: Բացի այդ, նախատեսվում է «Բանբեր Երևանի համալսարանի» և «Գիտական տեղեկագիր» հանդեսների խմբագրությունների անցում համապատասխան պրոռեկտորների համակարգման ներքո՝ ըստ հումանիտար և բնական ու ճշգրիտ գիտությունների գծով:

Ա. Միմոնյանը նշեց, որ այս առաջարկները քննարկվել են հոգաբարձուների խորհրդի նախագահի և ռեկտորի հետ, պրոռեկտորների մասնակցությամբ և ներկայացվում են գիտական խորհրդի հաստատմանը՝ հոգաբարձուների խորհրդի առաջիկա նիստին ներկայացնելու նպատակով:

**Արտահայտվեցին.** – Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանը նկատեց, որ այդ առաջարկների փաթեթին նախօրոք ծանոթանալու դեպքում, միգուցե այլ առաջարկներ էլ կլինեին, սակայն դրանց հաստատումից հետո հնարավոր է ներկայացվեն հատուկ կարծիքներ ու առաջարկություններ, որոնք օգտակար կլինեն: Անդրադառնալով հաշվապահության ու ֆինանսական ոլորտում ներկայացվող փոփոխությունների հարցին՝ ֆինանսահաշվարկային ամբիոնի վարիչ Հայկ Մնացականյանը նշեց, որ ամբիոնում կան ֆինանսական ոլորտի ուսանողներ, կադրեր, որոնք հետագայում այդ փոփոխությունների իրականացմամբ պայմանավորված կարող են ներգրավվել այդ ոլորտի աշխատանքներում: Ֆինանսահաշվապահական ոլորտում կառուցվածքային ու գործառույթային փոփոխությունների՝ ԵՊՀ-ի զարգացման հարցում ունենալիք դերի վերաբերյալ հարցադրմանն ի պատասխան՝ Ա. Միմոնյանը նշեց, որ հաշվապահական գործառույթները ներկայում ընդգրկում են ֆինանսական ողջ ոլորտը, որը ճիշտ չէ: Պետք է առաձևացնել ֆինանսական քաղաքականությունը մշակողն ու իրականացնողը, վերահսկողից: Փորձը ուսումնասիրվել է, մնացյալ բուհերը անցել են այդ կառուցվածքին: Գործող համակարգը արդի պայմաններին չի համապատասխանում և այն հնացած է: Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ Արա Ալեքսանյանի բարձրացրած այն դիտարկմանը, որ կառուցվածքի փոփոխությունները նախօրոք պետք է ունենային գիտխորհրդի անդամները, որպեսզի քվեարկեին, Ա. Միմոնյանը պատասխանեց, որ հարցը կարելի է մանրամասն քննարկել և հոգաբարձուների խորհրդին ներկայացնելու որոշման ընդունումից հետո անպայման կներառվեն ներկայացվող կարծիքներն ու հավելումները: Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գրադարանի տնօրեն Եզնիկ Միրզոյանը նշեց, որ գրադարանի համակարգման փոփոխությանն առնչվող հարցի քննարկմանը գրադարանի ներկայացուցիչներ ներառված չեն եղել՝ մտահոգություն հայտնելով

գրադարանի՝ ընդհանուր հարցերի պրոռեկտորի համակարգման ներքո անցնելու կապակցությամբ: Նա նկատեց, որ գրադարանը հանդիսանում է գիտական գրադարան, ինչը ֆիքսված է գրադարանի կանոնադրության մեջ, ուստի, նպատակահարմար չէ դրա ընդհանուր հարցերի պրոռեկտորի համակարգման ներքո առաջարկվող փոփոխությունը: Ի պատասխան՝ ռեկտոր Ա. Սիմոնյանը նշեց, որ ԵՊՀ գրադարանը չի հանդիսանում գիտական գրադարան, ինչպես նախկինում էր, քանի որ եղել է որոշում այդ հարցում և որևէ վատ բան չկա գրադարանի՝ ընդհանուր հարցերով պրոռեկտորի համակարգման ներքո լինելու մեջ, պարտադիր չէ, որ գրադարանը լինի ռեկտորի համակարգման ներքո: Նա նաև նշեց, որ գրադարանի տնօրենի բարձրացրած հարցը և հատուկ կարծիքը կկցվի փաթեթին և կներկայացվի հոգաբարձուների խորհրդին: Տիգրիկայի ֆակուլտետի դեկան Ռաֆիկ Հակոբյանը հարց բարձրացրեց ԵՊՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի և վարչական մասի աշխատակիցների հարաբերակցության, վարչական մասի աշխատակիցների թվի ուռճացված լինելու մասին, ինչին ի պատասխան Ա. Սիմոնյանը նկատեց, որ վերջին տարիներին վարչական մասում եղել են բազմաթիվ կրճատումներ: Տնտեսական մասի հաստիքները ևս հասցվել են մինիմումի: Մոտավորապես վերջին 3 տարիներին կրճատվել է 20 մարդ: Նվազագույն թվեր են, որոնք նույնիսկ արդյունավետ աշխատանքի առումով խնդիրներ են ստեղծել, սակայն չեն ավելացվել: Կենսաբանության ֆակուլտետի դեկան Էմիլ Գևորգյանը հարց բարձրացրեց հումանիտար և բնագիտական գծով երկու պրոռեկտորների հաստիքների ստեղծման նպատակահարմարության վերաբերյալ մատնանշելով այն հանգամանքը, որ հումանիտար ոլորտի ֆակուլտետներն ու ուսանողները 2 անգամ գերազանցում են բնագիտականին, ինչը կառաջացնի պրոռեկտորների տարբեր ծանրաբեռնվածություններ: Ռեկտոր Ա. Սիմոնյանը հույս հայտնեց, որ առաջիկայում և հետագայում բնագիտական ոլորտում զարգացում կլինի, քանի որ բնագիտական ոլորտն է, որ նպաստելու է երկրի զարգացմանը և ամենակարևոր հանգամանքը, կովանքը գիտության ու կրթության ոլորտները չտարանջատելն է: Արհեստակցական կազմակերպության նախագահ Արմեն Ավետիսյանի հարցին, թե արդյո՞ք պարզ է, թե քանի հաստիք է լուծարվելու նախատեսվող կառուցվածքային փոփոխությունների արդյունքում և արդյո՞ք կառուցվածքային ստորաբաժանումների վերամիավորում նախատեսող փոփոխությունների հարցերը քննարկվել են այդ ստորաբաժանումների հետ, Ա. Սիմոնյանը նշեց, որ այդ փոփոխությունների արդյունքում զգալի կրճատումներ չեն լինելու, իրենց հաստիքներին չհամապատասխանող մարդիկ կարող են կրճատվել և փոխարինվել, իսկ առաջարկվող փոփոխությունները որոշ ստորաբաժանումների հետ քննարկվել են, որոշների հետ՝ ոչ: Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան Վահրամ Դումանյանն իր ելույթում նշեց, որ ԵՊՀ բարեփոխումների իրականացումն ապահովող հանձնաժողովին ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը սկզբունքորեն մաս չի կազմել, թեև առաջարկվել է, քանի որ, ըստ նրա, համալսարանում կան գործող լեզիտիմ, օրինակարգ կառույցներ՝ ռեկտորատ և գիտական խորհուրդ, որոնք իրավասու են քննարկել օրակարգին առնչվող հարցերը: Վերջինս նշեց, թե որքանով է նպատակահարմար կառուցվածքային գլոբալ փոփոխությունների իրականացումը այն պարագայում, երբ ռեկտորի պաշտոնավարմանը մնացել է մոտ մեկ տարուց էլ քիչ ժամանակ, ինչ հաշվարկներ, ինչ ակնկալիքներ կան, ինչ էֆեկտ պետք է սպասել, քանի որ ապագայում համալսարանին ավելի խնդրահարույց հարցեր են սպասվում: Ըստ նրա՝ օրակարգում քննարկվող այդ հարցի փոխարեն կարելի էր բարձրացնել լսարանների, լսարանային տարածքի, կոմպյուտերային պարկի, ցանցի զարգացման հարցերը: Վ. Դումանյանը նշեց, որ գիտական խորհրդին ներկայացվող օրակարգի հարցերը մի քանի օր առաջ պետք է ներկայացվեին գիտխորհրդի անդամներին և սկզբունքային հարցերի հրնթացս քննարկումը համարելով ոչ ճիշտ՝ առաջարկեց օրակարգից հանել 2-րդ կետը լրացուցիչ քննարկումներ կազմակերպելու նպատակով: Վերջինս խնդրեց նաև հրապարակել ԵՊՀ-ում

բարեփոխումների իրականացման հանձնաժողովի կազմը, լիազորություններն ու գործառնությունները: Ի պատասխան ելույթի ու հնչեցված հարցադրումների՝ ռեկտոր Ա. Միմոնյանը նկատեց, որ բարեփոխումների հանձնաժողովը ստեղծվել է ռեկտորի հրամանով, որը ռեկտորի լիազորությունն է: Հրամանն ուղարկվել է համապատասխան ստորաբաժանումներին, բոլոր ֆակուլտետներին: Ռեկտորը նշեց, որ եթե ֆակուլտետի ներկայացուցիչը ընդգրկվեր և մասնակցեր հանձնաժողովի աշխատանքներում, այսօր տեղեկացված կլինեին դրա գործունեությունից, ինչը սակայն ֆակուլտետի կողմից մերժվել է: Նա նաև ասաց, որ ԵՊՀ-ում հաստիքների ու կառուցվածքի փոփոխությունները հաստատվում են հոգաբարձուների խորհրդի կողմից: ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ Վահե Հովհաննիսյանը հնչեցված հարցադրումների կապակցությամբ նշեց, որ կառուցվածքային՝ մասնավորապես պրոռեկտորների հաստիքների վերասահմանման փոփոխությունների նպատակի հիմքում բնագիտական և հումանիտար ոլորտների ուսումնական գործընթացների կազմակերպման էական տարբերություններն են, քանի որ այդ երկու ուղղություններով գիտական ու կրթական գործընթացները չեն կարող միևնույն ձևով կազմակերպվել: Հետևաբար, քանի որ կրթությունն ու գիտությունը չեն կարող տարանջատվել, առանձին լինել միմյանցից, առաջարկվել է ներդնել այդ տարանջատումը: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հայկ Սարգսյանն իր ելույթում, անդրադառնալով բարեփոխումների հանձնաժողովին, նշեց, որ ֆակուլտետի ներկայացուցիչն ընդգրկված է այդ հանձնաժողովի՝ չափազանց բուռն ընթացող քննարկումներում ու աշխատանքներում, որի գործունեությունը բավական արդյունավետ է: Ըստ նրա՝ կառուցվածքային փոփոխությունների առաջարկները չափազանց կարևոր ու արդիական են, կա դրանց անհրաժեշտություն, մասնավորապես ըստ ուղղությունների պրոռեկտորների տարանջատումը արդարացված է: Հայկ Սարգսյանը նշեց նաև, որ հոգաբարձուների խորհրդին կարող են ներկայացնել նաև կառուցվածքային փոփոխությունների առաջարկներին կից հատուկ կարծիքներ, որոնք կարող են օգտակար ու լրացնող նշանակություն ունենալ:

**Որոշեցին** – ԵՊՀ կառուցվածքում և հաստիքացուցակում փոփոխություններ կատարելու վերաբերյալ ներկայացված առաջարկները, հնարավոր կից հատուկ կարծիքներով ու փոփոխություններով, ներկայացնել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին:

**3. Լսեցին.** – Մագիստրոսի կրթական ծրագրով 2019-2020 ընդունելության տեղերի մասին հարցը: Պրոռեկտոր Մ. Սողոմոնյանը, ներկայացնելով օրակարգի հարցը, նշեց, որ առկա ուսուցմամբ նախատեսված են անվճար 328 տեղ, վճարովի՝ 1200: Իջևանի մասնաճյուղի համար 2019-2020 ուստարվա համար նախատեսված է 11 տեղ:

**Որոշեցին** – Մագիստրոսի կրթական ծրագրով 2019-2020 ընդունելության տեղերի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

**4. Լսեցին.** – Ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների տրամադրման կարգում փոփոխություններ կատարելու մասին հարցը: Պրոռեկտոր Մենուա Սողոմոնյանը զեկուցեց «ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների տրամադրման կարգում» փոփոխություններ կատարելու մասին՝ նշելով, որ առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել կանոնակարգի 19.11-րդ կետը, որի համաձայն՝ ԵՊՀ-ն իր միջոցների հաշվին 30 տոկոսի չափով իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների (երկու ծնողները) երեխա ուսանողներին. Նրա

ներկայացմամբ՝ այդ փոփոխության իրավական հիմքը ՀՀ Կառավարության ընդունած համապատասխան որոշումն է:

**Որոշեցին** – հաստատել Ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների տրամադրման կարգում փոփոխությունները:

**5. Լսեցին.** – ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը հաստատելու մասին հարցը: Գիտական խորհրդի որակի ապահովման հանձնաժողովի նախագահ Էմիլ Գևորգյանը գիտխորհրդի հաստատմանը ներկայացրեց ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը՝ նշելով, որ հանձնաժողովի նիստի ընթացքում քննարկվել են կրթական 4 նոր ծրագրեր, որից 2-ը մագիստրոսական, 2-ը՝ բակալավրի՝ փաստելով, որ դրանք անցել են համապատասխան բոլոր ընթացակարգերը, եղել են ներքին ու արտաքին գնահատման գործընթացներ: Բակալավրի կրթական ծրագրերից մեկը ներկայացված է աստվածաբանության ֆակուլտետի կողմից և կոչվում է «Կրոնագիտություն», մյուսը՝ պատմության ֆակուլտետի «Հնագիտություն և ազգագրություն» ծրագիրը: Մագիստրոսական նոր ծրագրերը ներկայացված են ֆիզիկայի ու էվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետների կողմից և համապատասխանաբար կոչվում են «Պինդ մարմնային նանոֆիզիկա և նանոնյութեր» և «Վարչագործարարական թարգմանություն»:

**Որոշեցին** – հաստատել ԵՊՀ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերը:

**6. Լսեցին.** – ԵՊՀ գիտական խորհրդի հանձնաժողովների կազմում փոփոխություններ կատարելու մասին հարցը: Գիտքարտուղար Լևոն Հովսեփյանը նշեց, որ փոփոխություններ նախատեսվում են երկու հանձնաժողովներում՝ իրավական ակտերի, նախագծերի մշակման և փորձաքննության ու մրցութային: Փոփոխությունները պայմանավորված են պրոռեկտորների և գիտական քարտուղարի փոփոխմամբ: Ըստ այդմ՝ առաջարկվեց ԵՊՀ գիտական խորհրդի կազմից դուրս գալու կապակցությամբ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի կազմից հանել՝ Ալեքսանդր Կոնստանտինի Գրիգորյանին և Գեղամ Գրիգորի Գևորգյանին և գիտական խորհրդի կազմում ընդգրկվելու կապակցությամբ հանձնաժողովի կազմում հաստատել Արսեն Ժորայի Բաբաջանյանին և Լևոն Սահակի Հովսեփյանին: Գիտական քարտուղարի պաշտոնից ազատվելու կապակցությամբ առաջարկվեց գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի կազմից հանել՝ Մենուա Անդրանիկի Սողոմոնյանին և գիտական քարտուղարի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ նույն հանձնաժողովի կազմում հաստատել Լևոն Սահակի Հովսեփյանին:

**Որոշեցին** – հաստատել ԵՊՀ գիտական խորհրդի հանձնաժողովների կազմում առաջարկվող փոփոխությունները:

**7. Լսեցին.** – Զեկուցում՝ ՀՀ ռազմական բարեփոխումներն արդի մարտահրավերների համատեքստում թեմայով: ՀՀ պաշտպանության նախարարի մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը ներկայացրեց պաշտպանական ոլորտում իրականացվող բարեփոխումները, որոնք ուղղված են արդի մարտահրավերների պայմաններում զինված ուժերի կարողությունների ու մարտունակության մեծացմանը: Նա նշեց, որ առանցքային խնդիրը վերաբերում է զուտ պաշտպանողական մարտավարությունից դեպի նախահարձակ գործողությունների անցմանը:

**Որոշեցին** – Ա. Հովհաննիսյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

Նիստի ավարտին ռեկտոր Ա. Միմոնյանը հանդես եկավ հայտարարությամբ՝  
հայտարարելով իր հրաժարականի մասին:

Գիտական խորհրդի նախագահ

Ա. Ն. Միմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար

Լ. Ս. Հովսեփյան

23.05.2019թ.

